ալրատօճի[80] *մեջ։ Շրոութկանին քարը կախված է* ֆօղի *օգնությամբ։ Շրոութ-*
կանից *հացահատիկը թափվում է* ճըղացըֆարի *կենտրոնական ծակի մեջ*
ձագարանման բօղազըղավ: Ճըղացըֆարը *բարձրացնում են ամուր փայտե*
կամ երկաթե լէնգավ *կամ երկաթե* լօմբավ[81] *և սահեցնում են երկու ծայրերին*
հաստ գլուխներ ունեցող գլանով։

Այսպիսի մի ջաղաց 24 ժամվա մեջ կարող է աղալ 8—10 փութ
(մոտ 1—1/2 ցենտներ) հացահատիկ։

Առաջին ալյուրից հենց տեղնուտեղը ջաղացում թխվում է փոքր բօրէնի
մեջ բաղարճը[82] *և բաժանվում է ներկա եղողներին։ Այս* մագիկ *միջոցառումն*
ալյուրի առատությունը, բարաֆա̈քճ[83] *ապահովելու համար էր։*

Ժողովուրդը հավատում էր, որ ջաղացի տակը ֆաշֆէրճ *են սիրում ապ-*
րել, մանավանդ, թօփի՝ *անիվի տակ։ Կան մեկնողներ, թե այդ հասկացո-*
ղությունը ծագել է այն բանից, որ ժողովուրդը ջրի անկման շարժիչ ուժը
վերագրում է ոգիների միջամտությանը՝ իբրև նրանք են, որ անիվը պտտեց-
նում են։

Հացահատիկը վերամշակվում է ոչ միայն ալյուր, այլև ձավար ստանա-
լու համար։ Վերջին նպատակով գերադասվում է հաճարը։ Ձավարը պատ-
րաստվում է դինգի[84] *օգնությամբ։* Դինգը *փորվում է կամ մայր ժայռի մեջ*
կամ շարժական ծանր քարի մեջ։ Նրա դաստաճ՝ *թակիչը բռնում են երկու*
ձեռներով։

Թե՛ գետնի մեջ փորած և թե՛ ազատ դինգէրը *հայտնաբերված են պեղում-*
ների միջոցին ուրարտական ժամանակաշրջանի ժողովրդական բնակարան-
ներում, օրինակ՝ Կարմիր բլուրի ամրոցին կպած բնակավայրում[85]։

ՍՐԱՆՈ̈Ւ Ց

Հողագործության արտադրանքներից յուղատուները վերամշակվում են
ձիթահանքերում, որոնք այստեղ, ինչպես և հարևան գավառներում՝
Լեռնային Ղարաբաղում, Գանձակում կոչվում են սրաճօ̈ւց, *Մեղրու շըր-*
ջանում՝ սի՛րա̈ճուց, *մի բառ, որ ծագում է* սրել, սուր *բառերից, մինչդեռ այլ*
վայրերում գործ է ածվում ձիթաճաճֆ *անունը։ Հին զանգեզուրցու սննդի մեջ*
կենդանական յուղից ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ ձեթը, նույ-
նիսկ այն ժամանակ, երբ կրոնական ջերմեռանդության թուլացման հետե-
վանքով չորեքշաբթի և ուրբաթ օրերին, յոթշաբաթյան մեծ պասին և այլ
տեական պասերին մսեղեն և յուղեղեն կերակուրներից հրաժարվելու սովորու-
թյունը ոչ միայն երիտասարդների, այլև ծերացած սերունդի մեջ հետզհետե
ավելի ու ավելի խախտվում էր՝ մինչև իսկ բոլորովին վերանում։ Այդ է պատ-
ճառը, որ նախահեղափոխական պայմաններում ձիթատու բույսերի մշակության
հատկացրած տարածությունն այնքան էլ սահմանափակ չէր։ Ցանվում էին և
այժմ էլ ցանվում են կտավճատը, ֆունջուբը, ճըլա̈ձուկը: *Նրանցից ձեթ հանե-*
լու համար 1886 թվին միայն արքունական գյուղերում[86] *գործում էին 24* սրա-

---

80 Իլրա՛տօճ—*Մեղրու բարբառով։*

81 Լօմբ, *ռուս.* ЛОМ *բառից։*

82 *Հաց առանց աղի և թթխմորի, Մեղրու բարբառով՝* պա՛ղաճ:

83 *Մեղրու բարբառով։*

84 *Շատ մեծ հավանգ։*

85 *Пиотровский Б. Б.,* Урарту, 1944, *էջ 173։*

86 *Зелинский С. П., նշված աշխ., էջ 122։*